

Հայտարարություն
ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը հրապարակում է սույն
հայտարարությունը փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը. մարզպետի աշխատակազմի պատվիրակությամբ իրականացվող շինարարական աշխատանքների, համայնքներին տրամադրվող սուբվենցիաների նկատմամբ հսկողության իրականացում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է **մեկ տարի ժամկետով:**

Փորձագետի պարտականությունները՝ իրականացնում է Սյունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրակությամբ իրականացվող շինարարական աշխատանքների ժամկետների, որակի, նախագծով նախատեսված աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում, սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների ժամկետների, որակի, նախագծով նախատեսված աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում, ըստ անհրաժեշտության կատարողական ակտերի հավաստիության ստուգում և անհրաժեշտ չափումների իրականացում:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- ունի բարձրագույն կրթություն՝ «արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտությամբ (առնվազն բակալավրի աստիճան).
- ունի հանրային ծառայության 3 տարվա կամ 3 տարվա մասնագիտական ստաժ:
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փառձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Ընտրությունը կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ (0285) 44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 14/02/2023թ.:

քաղաքացի _____ -ից
(դիմողի անունը, ազգանունը)

_____ հիմողի հասցեն

_____ Էլեկտրոնային հասցեն

_____ հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ _____ էջ.
Առդիր՝ _____ էջ.

Դիմող՝ _____
ստորագրություն անուն, ազգանուն

« _____ » _____ 202 թ.

Նախազգուշացված եմ՝ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: